

ԾՐԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՒՍԱՓԵԼԻ ԿՈՒՐՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ԳՆԱՀԱՏՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ
 ԵՌՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Ապրիլի 6-8, 2019թ., ք. Երևան (Հայաստանի ամերիկյան համալսարան) և ք. Սևան
 (Սևանի Լայոնս մարզային ակնաբուժական կենտրոն)

Հայաստանի ամերիկյան համալսարանի Ավետիսեան Օնանեան առողջապահական
 ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնին (ԱԾՀԶԿ) կից Կարո
 Մեղրիկեան աչքի հիվանդությունների կանխարգելման կենտրոն

Օր 1՝ ապրիլի 6		
Վայր՝ Հայաստանի ամերիկյան համալսարան		
09:00-10:30	Նախնական տեղեկություն ԽԿԱԳ ծրագրի վերաբերյալ: Ծանոթանալ ԽԿԱԳ ծրագրի առանձնահատկություններին և բժշկական գրառումների մատյանի հետ: Սովորել, ինչպես իրականացնել ակնաբուժական զննումներ տնային այցերի պայմաններում:	Ալա Պաղուկա
10:30-11:00	Սուրճի ընդմիջում	
11:00-13:30	Տեսական մաս՝ Ծանոթանալ ԽԿԱԳ ծրագրի ակնաբուժական զննման արձանագրության (protocol) առանձնահատկություններին: Մանրամասն քննարկել, թե ինչպե՞ս իրականացնել ակնաբուժական զննումը քայլ առ քայլ՝ տեսողության սրության ստուգում E աղյուսակի միջոցով, տեսողության սրության ստուգում պինհոլով, ռեֆրակտիվ շեղումների բացահայտում, աչքի բբի լայնացում բբլայնիչի միջոցով, ոսպնյակի զննում, ակնահատակի զննում ուղիղ օֆտալմոսկոպի միջոցով, տեսողության սրության ստուգում կատարակտի վիրահատությունից հետո, վատ տեսողության պատճառների արձանագրում կատարակտի վիրահատությունից հետո:	Ալա Պաղուկա

13:30-14:30	Ճաշի ընդմիջում	
14:30-17:00	<p>Գործնական վարժություն</p> <p>Տեսողության սրության ստուգում և հետազոտում: Արդեն իսկ ձևավորված թիմերը (ակնաբույժ, բուժքույր) կիրականացնեն ակնաբուժական զննում միմյանց շրջանում ակնաբուժական հետազոտություն կիրականացնելով: Յուրաքանչյուր թիմին կտրամադրվի՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Օֆտալմոսկոպ 2. Լապտեր՝ նախատեսված աչքի զննման համար 3. Պինհոլ 4. E-աղյուսակ 5. Բբլայնիչ և այլ անհրաժեշտ դեղորայք 6. Գրենական պիտույքներ 	Ալա Պաղուկա, Նաիրա Խաչատրյան
<p>Օր 2՝ ապրիլի 7</p> <p>Վայր՝ Հայաստանի ամերիկյան համալսարան</p>		
09:00-11:30	<p>Տեսական մաս՝</p> <p>Միջզննման շեղման գնահատում (մաս 1): Այս փուլում վերապատրաստման մասնակիցները կստանան տեսական գիտելիքներ, թե ի՞նչ է միջզննման շեղումը, ինչպե՞ս են այն գնահատում և ո՞րն է միջզննման շեղման թույլատրելի շեմը:</p>	Ալա Պաղուկա
11:30-12:00	Սուրճի ընդմիջում	
12:00-13:30	<p>Տեսական մաս՝</p> <p>Միջզննման շեղման գնահատում (մաս 2): Այս փուլում մասնակիցները կտեղեկանան, թե ինչպե՞ս են իրականացնում միջզննման շեղումը, ինչպե՞ս բարելավել տեսողության սրության ստուգման և աչքի հիվանդությունների ախտորոշման ճշգրտությունը թիմերի միջև, ինչպե՞ս լրացնել միջզննման շեղման բժշկական գրառումների մատյանը և ինչպե՞ս մուտքագրել ստացված տվյալները:</p>	Ալա Պաղուկա
13:30-14:30	Ճաշի ընդմիջում	
14:30-17:00	<p>Տեսական մաս՝</p> <p>Միջզննման շեղման գնահատում (մաս 3): Այս փուլում մասնակիցները կտեղեկանան, թե ինչպե՞ս վերլուծել միջզննման շեղման</p>	Ալա Պաղուկա

	արդյունքները և ինչպե՞ս համեմատել ստացված արդյունքները թիմերի միջև:	
Օր 3՝ ապրիլի 8 Վայր՝ Սևանի Լայոնս Մարզային Ակնաբուժական Կենտրոն, ք. Սևան, Գեղարքունիքի մարզ		
09:00-14:00	Գործնական վարժանք՝ Մասնակցում են բոլոր ձևավորված թիմերը: Այս փուլում թիմերը կիրականացնեն ակնաբուժական զննում 50 անց տարիքի մոտ 50 անձանց շրջանում Սևանի Լայոնս մարզային ակնաբուժական կենտրոնում: Յուրաքանչյուր թիմ կիրականացնի ակնաբուժական զննում միևնույն պացիենտների շրջանում: Ակնաբուժական զննումը իր մեջ ընդգրկում է տեսողության սրության ստուգում E-աղյուսակի միջոցով, տեսողության ստուգում պինհոլով, աչքի բբի լայնացում բբլայնիչի միջոցով, ռեֆրակտիվ շեղումների հայտնաբերում, աչքի առաջային հատվածի հիվանդությունների հայտնաբերում, կատարակտի, գլաուկոմայի, դիաբետիկ ռետինոպաթիայի, մակուլյար դեգեներացիայի և աչքի այլ հիվանդությունների հայտնաբերում:	Ալա Պաղուկա, Նաիրա Խաչատրյան
14:00-15:00	Սուրճի և ճաշի ընդմիջում	
15:00-18:00	Տեսական մաս՝ Գործնական վարժանքից հետո բոլոր թիմերը կրկին հանդիպում են՝ աշխատանքի փորձի քննարկման համար: Թիմերը կբարձրաձայնեն պրակտիկայում առաջացած խնդիրները և կքննարկեն դրանց հնարավոր լուծումները: Այս փուլում նաև տեղի կունենա տվյալների մուտքագրում և միջզննման շեղման արդյունքների գնահատում:	Ալա Պաղուկա, Նաիրա Խաչատրյան

Թիրախային լսարան՝ ակնաբույժներ, բուժքույրեր:

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 5 ակնաբույժ, 4 բուժքույր: